



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ի. Բ. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 14 ՄԱՐՏ 1887

ԹԻԻ 3864

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրեալները դրկելու է պղմատակարարութիւն Սրբեկքի եւ Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուրքեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ազգային (Տ. Յարութիւն Պատրիարքի հրաժարականը պէտք է ընդունել)
ՀՐԱԶԴԱՆ Օրուան կեանքը
Իզմիրէն Նամակ
Թ. Բիւրիսէն Նամակ
Պ. Ա. ՏՈՒՆ ԶՈՒԲՕՎ Ղարաբաղի աստղագէտ Գերմանիոյ կայսրը

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԱԹ 13 ՄԱՐՏ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԻ
ՀՐԱԶԴԱՆԱԿԱՆԸ ՊԵՏԻ Ե ԸՆԴՈՒՆԻՒ

Տ. Յարութիւն Պատրիարք ետ առաւ իւր հրաժարականը մի քանի առուրց համար, մինչեւ ցկարգադրութիւն ստիպողական առկա լինողոց: Ազգային ժողովն այս ուրբաթ պարտաւոր էր գումարել այդ հրաժարականը լսելու եւ իւր որոշումը տալու, սակայն Ատենայեան Դիւանն այլ կերպ անօրինեց. ինչո՞ւ, ի՞նչ իրաւամբ:

Անշուշտ յառաջիկայ ուրբաթ, մարտ 20, Ազգային ժողովը կը գումարի այս խնդրոյ վրայ խորհրդակցելու: Ժողովն առանց վիճարանութեան պէտք է որ ընդունի Տ. Յարութիւն Պատրիարքի հրաժարականը, վասն զի անկարելի է որ այլ եւս Ն. Սրբազնութիւն կարենայ օգտակար կերպով շարունակել երկու Պատրիարքութեանց հոգը միանգամայն:

Երուսաղէմ ունի այնպիսի կնճառ խնդիրներ որոց կարգադրութեան համար հաղիւ թէ կարենայ բաւել Պատրիարքի մը բոլոր հոգածութիւնն. ուրեմն հարկ է որ Տ. Յարութիւն Պատրիարք անցնի Երուսաղէմատուն եւ

անտի խնամէ Երուսաղէմայ գործերն, եւ Կ. Պոլիս ալ ունենայ իւր Պատրիարքն, վասն զի Պոլսոյ եւ գաւառաց ազգային գործերն ալ նուազ հոգածութեանց կարօտ չեն:

Տ. Յարութիւն Պատրիարքի հրաժարականն ո՛չ ուրախութիւն կը պատճառէ ազգին ո՛չ ալ ցաւ: Ն. Սրբազնութիւն իւր պաշտօնավարութեան միջոցին ազգին վնաս մը հասցնելու, չարութիւն մը ընելու հակամէտ չեղաւ, այլ ընդհակառակն ազգին օգտակար կերպով ծառայելու տրամադիր էր: Ստոյգ է որ շատ դժգոհութիւններ պատճառեց, բայց ո՞ր Պատրիարք դժգոհութեան առիթ չէ ընծայած եւ չպիտի ընծայէ: Սակայն Տ. Յարութիւն Պատրիարք պատասխանատուութենէ ազատ է, իբր սահմանադրական Պատրիարք:

Իբր սահմանադրական Պատրիարք Յարութիւն Սրբազան իւր գործոց ուղեցոյց պիտի ունենար Ազգային ժողովոյ ոգին, եւ այդ ոգին ակներեւ յայտնուեցաւ նոր Քաղ. ժողովոյ մը ընտրութեան օրն: Ազգ. ժողովն ընտրեց իւր ազատ քուէով Քաղ. ժողովոյ անդամ այնպիսի անձնաւորութիւններ, որք նորեկ չէին ազգային գործոց մէջ, որոց անցեալ ուղղութիւնը լաւ ծանօթ էր: Այդ ընտրութեամբ Ազգ. ժողովը մատնանիշ ըրաւ նորընտիր Պատրիարքին այն ճանապարհն ընդ որ պարտական էր ընթանալ եւ Պատրիարքն համակերպեցաւ, եւ միշտ համերաշխ գտնուեցաւ Քաղ. ժողովոյ եւ յայդմբնաւ մեղապարտ չէ:

Սակայն ընդհակառակն Ս. Պատրիարքը միշտ կատարելապէս համերաշխ չգտնուեցաւ եկեղեցականաց հետ: Եպիսկոպոս մը Պատրիարք լինելէ առաջ եկեղեցական է եւ իւր համերաշխութիւն եկեղեցականաց հետ ենթարկեալ չէ Ազգ. ժողովոյ մը հաճոյքը: Ինքնածին պարտականութիւն մ'է: Եկեղեցականք չեն կարող ունենալ անհատական խիղճ, այլ ունին հաւաքական խիղճ:

Յարութիւն Պատրիարք եւ Նուրեան էֆէնտի Քաղ. ժողովն անցան ի գլուխ ազգային գործոց շատ ծանր ժամանակի մը մէջ: Կաթողիկոսական խնդիրը նոր կերպարանքով մը կը ներկայանար եւ եկեղեցւոյ մէջ հերձուա-

ծի վտանգ կար: Երուսաղէմայ պարտքն օր ըստ օրէ կը բարդուէր. Կարկուռ ոյժ եւ զօրութիւն գտած յաղթանակ տանելու վրայ էր: Առանձնահորհմանց խնդիրն առկա էր. վազըֆներու կենսական գործն սպառնալից էր: Պատրիարքական ակթուն երկարատեւ թափուր մնացած լինելով ազգային գործերը լքեալ էին: Անխիստութիւն ամէն ուրեք կը տեղէր:

Դեռ թէ երկու տարի Պատրիարք եւ Վարչութիւն չարաչար աշխատելով խիստ շատ գործեր գոհացուցիչ կերպով կարգադրեցին: Ի բաց առեալ Երուսաղէմայ պարտուց խնդիրը, միւս ամէն խնդիրները գոհացուցիչ վիճակի մէջ դրին: Երուսաղէմայ պարտուց խնդրոյն համար ալ ո՛ր եւ է ջանք չի խնայեցին:

Երբ մէկ կողմանէ յարաբերական ծանր խնդիրներն յաջող կերպով վերջացնելու հետամուտ եղան Պատրիարք եւ Վարչութիւն, միւս կողմանէ իրենց հոգածութիւնը կը նուիրէին ներքին գործոց մասին բարեյաջող տնօրինութիւններ ընելու:

Բարեկարգեցաւ Պատրիարքարանի երեւմտեան: Այլ եւս չկրկնուեցան այն դժբաղդ օրերն յորում Պատրիարքարանի պաշտօնեայք ամիսներով ամսականի երես չէին տեսներ: Ամէն ամիս վճարումներն եղած ըմբոստ էն:

Տնտեսական եւ կրթական խնդրոց համար հիմնական տնօրինութիւններ ընելու հետամուտ եղան: Բաւական կարգադրութիւններ ըրին, բաւական օգտակար միջոցներ ձեռք առին Եթէ Յարութիւն Պատրիարքի եւ Նուրեան էֆէնտի յաջորդը շարունակեն կատարելագործել այս ձեռնարկներ, մի քանի տարիներու մէջ ազգն իրական բարեքներ պիտի վայելէ:

Այսքան օգտակար ծառայութեանց մէջ սխալներ եւս գործուեցան. այդ սխալներն որք կըքեր բորբոքելու խնդրոց կը պատկանէին, պահ մը մոռցնել տուին այն լաւ գործերն որք առանց աղմուկի կատարուած էին: Վասնայ եւ Քարբեղի խնդիրները վնասեցին Պատրիարքի եւ Վարչութեան հասարակաց զղացումն այնքան հակառակ էր վարչութեան կարծեաց այս խնդրոց մէջ որ Վարչութիւնը պարտաւորեցաւ գըրեթէ տեղի տալ:

Տ. Յարութիւն Պատրիարքի եւ Նուրեան էֆէնտի պաշտօնավարութեան

ՕՐՈՒՄՆ ԿԵԱՆՔԸ

ՕՐԹԱԳԻՒՂ, 10 Մարտ

առաջին եւ վերջին օրերը պատահեցան այնպիսի դէպքեր՝ որք իբր զէնք գործածուեցան ընդդէմ նոցա ժողովուրդ մը շատ անգամ այնպիսի զգացումներ ունի որոց կը զոհէ ամէն դրական օգուտներ։ Ժողովուրդի մը կեանքն այդ զգացումներով ապահովուած է։ Ժողովուրդի մը կառավարիչները գուցէ աւելի խոհական կերպով շարժին այսպիսի պարագայներու մէջ քան թէ ժողովուրդը, բայց եւ այնպէս հաճելի չեն կրնար լինիլ։

Ինչ որ ալ լինի զանազան կարեւոր խնդրոց մէջ մասնաւորապէս Նուրեան էֆէնտիի քաղաքականութիւնը, մենք զինքը բնաւ մեղադրելի չենք համարելը։

Նուրեան էֆէնտիի դաւանանքները քաջ ծանօթ էին Ազգ. Ժողովոյ, եւ Ազգ. Ժողովը կատարեալ գիտակցութեամբ ընտրեց զնա անգամ Քաղ. Ժողովոյ որոյ պիտի լինէր պետ. Նուրեան էֆէնտի երբեք չէ կեղծած իւր զգացումներն ու գաղափարներն, անկեղծ եղած է միշտ. եթէ Ազգ. Ժողովն ազգային շահուց համապատասխան չէր գտներ Նուրեան էֆէնտիի դաւանանքները, թող չընտրէր զնա, բայց անգամ մը որ ընտրուեցաւ, զոհողութիւն պահանջելու իրաւունք չունի։

Մի քանի երեսփոխանք Նուրեան էֆէնտիի քուէ չտուինք եւ աշխատեցանք որ չընտրուի. բայց չյաջողեցանք. սակայն մի քան ալ իրեն հակառակորդ լինինք զանազան խնդրոց մէջ, չենք կրնար զինքն ամբաստանել թէ՛ խաբած է ազգը։ Չենք կրնար նաեւ ըսել թէ արդիւնաւոր պաշտօնավարութիւն մը չունեցաւ տնտեսական, կրթական եւ ուրիշ հիմնական խնդրոց մէջ. Ինչ կ'ըսենք Նուրեան էֆէնտիի համար, նոյնն է Յարութիւն Պատրիարքի համար՝ որ երբեք չբաժնուեցաւ Քաղ. Ժողովոյ ատենապետէն։

Այս ամէն նկատումներով հանդերձ՝ անհրաժեշտ հարկ է ընդունիլ Տ. Յարութիւն Պատրիարքի հրաժարականն։ Ազգին վրայ յոգնութիւն մը կայ. օր ըստ օրէ Պատրիարքին ժողովրդակաՆութիւնը կը պակսի։ Հետզհետէ աւելի բացորոշ կը տեսնուի թէ անհնարին կը լինի երկու պատրիարքութեանց հոգը միանգամայն վարել, եւ մանաւանդ պէտք մ'ալ չկայ մի եւ նոյն անձը բեռնաւորել երկու ամենածանր պաշտօններով։

Յարութիւն Պատրիարք եւ վարչութիւն կարող են ըսել թէ կատարեալ անիշխանական վիճակ մը գտան, եւ կը թողուն իրենց պաշտօն երբ ազգային իշխանութիւնն ամէն ուրեք հաստատուած է եւ յարգուած։

Ա. Ա.

Արդարացում. — Ամիսներու լաւագոյնը. — Հայերն եսական չեն. — Արիւնքի եւ Հեկտորի մենամարտը. — Համադամական ներքող. — Սեղանի մը շուրջը. — Եղբայրական համբոյր. — Պատրիարքոյ. — Սըբաղան վաճառականութիւն. — Կաթողիկոսական տիպար. — Երկու հայ վանքեր. — Գիծ վարդապետը. — Գուշակութիւն։

Կը բաւէ, ա'լ կը բաւէ որչափ գրեցիք բանաձեւ, գիտում, խառն ժողովոյ նիստ, անհամաձայնութիւն, ընչ մ'ալ ուրիշ բան գրեցէ՛ք. միշտ մի եւ նոյն բանը, միշտ մի եւ նոյն բանը կը գրէք, կ'ըսէք մեզ։

Եւ մենք ալ Բիշոօյի պատասխանը կուտայինք։

— Միշտ մի եւ նոյն բանը կ'ըսեմ, վասն զի միշտ մի եւ նոյն բանն է, եւ եթէ միշտ մի եւ նոյն բանը չըլլար, միշտ մի եւ նոյն բանը չէի ըսեր։

Ինքզինքս այսպէս կ'արդարացնէի, բայց արդարացում մը կրնայ արդար ըլլալ, սակայն այդ պատճառ մը չէ որ ընթերցողք գոհ մնան։ Միօրինակութիւնը պէտք էր բեկանել եւ անձկանօք կ'սպասէի Մարտ ամիսը։

Ամիսներուն ամենէն անձկալի մարտն է ինձ համար, ո՛չ ապրիլը, ո՛չ մայիսը։ Մարտի դէմ կրնանք շատ դանդաղանք ունենալ, բայց առաւելութիւն մը ունի յորմէ զուրկ են միւս բոլոր ամիսներն, մէկ ժամը միւսին չնմանիր, միօրինակ չէ, հետեւաբար ձանձրանալի չէ։ Մարտ ամիսն ապահովաբար պիտի ներգործէր նաեւ մեր ազգային ճակատագրին վրայ, ինչպէս լուսինն ազդեցութիւնը ծովու եւ ցամաքի վրայ, նոյն եւ եղանակներու ազդեցութիւնը մեր գործոց վրայ ճշմարտութեանց դասէն է։

Եւ չխաբուեցանք մեր յոյսերու մէջ։ Մարտ ամիսն իւր բարեբար ազդեցութիւնն ըրաւ, նոյն իսկ առաջին օրերէն։ Որպիսի՛ նորօրինակ հանդէսներ տրք շեցուցին մեր սրտերն, ինչպէս կ'ըսեն, բերկրապատար խնդութեամբ։ Ուրախացանք ու խնդացինք։ Ըսուած է թէ՛ մարդ կորսուած օր մը պէտք է համարի միայն այն օրն ուր չ'ընդգար։ Միշտ խնդալը կը սիրենք, ինչ որ ալ լինի շարժառիթն, բայց երբ սուրբ ուրախութեամբ մը կը խնդանք, բնական է որ գոհունակութիւնն իր կրկնապատիկ լինի։ Այդ ուրախութիւնն — հանդերձ խնդումով — պատճառեցին մեզ մարտի ազգային գործեր։

Եսական ազգ հայ ազգն։ Որպիսի՛ սեւ գրպարտութիւն օրուն համոզուելու համար բաւական էր մարտ 2ին, երկուշաբթի օր, զեղբրիլ Գում-Գաբուի Մայր-եկեղեցւոյ շուրջն։ Երեկոյ էր. արեգակն հուսկ ձառագոյնները Մարմարայի վրայէն թեթեւ մեղմադձութիւն մը, — ձմրան վերջի օրերու մեղմադձութիւնը — կը տարածէին Գում-Գաբուի վրայ. խոր լուծիւնը կը տիրէր, երբ յանկարծ հնչուեցաւ Երուսաղեմաւան պատուհաններէն — ինչպէս թընդանօթի մը արձալումը գիշերային անդորութեան մէջ — օգնութիւն, օգնութիւն, բարապա՛նք, բարապա՛նք, հասէ՛ք։

Եւ բարապանները կը վաղէին, եւ ժամկոչներն եկեղեցիէն դուրս կը ցատկէին, եւ քահանայներն առանց միեւնի կը սլանային, եւ Պատրիարքարանի դրագիրներն ահա-

բեկ փողոցները կ'իյնային, արք եւ կանայք կը խռնուէին, ջրկիրները կը շրջադառնէին Երուսաղեմաւան։ Ամէն ոք հրդեհի սարսափին ներքեւ էր։ Բայց Անուշ վարդապետ, իւր անանուշ ձայնով եւ դողդոջուն ձեռքերով կ'սպասուցնէր ահաբեկներն. հրդեհ չկար. բարապանն ու ժամկոչ կը բաւէին, — գուցէ երկու դադաղ միասին։

Հոմերական պատերազմ մը կը մղուէր խաղաղութեան սուրբ օթեւանին մէջ։ Արիւնքի եւ Հեկտորի կը մենամարտէին սուրի տեղ անգլիական պոփ, իսկ վահանի փոխան կեսարական բազուկներ։ Նեստոր եւ Ագամեմոն կը կլորցնէին իրենց բազուկները, զերթ դողաւոր վահաններ, Կեւ կը բարձրացնէին զայնս ի մէջ երկուց պատերազմողաց։ Բայց բոռնցները կ'երթեւեկէին այդ մտեղէն վահաններու լուսամտներէն։

Բարապաններն արդէն պատրաստած էին խրոխտ ձի մը որոյ վրայ հեծած զիւ պաղեղն Աքիլլեսն եւ աղիէն կապած Պրիամու տարաբաղդ զաւակն ընդ քարշ պիտի ածէր զնա մարմարական պարիսպներէն մինչեւ ց'Սալիւ-փաշա խանի դրանց առաջ, ուր յօշոջ մարմինը պիտի նետէր Մէրեթ-գուլի էֆէնտիի ոտից ներքեւ, — մեծ կտորն աւանջը մնացած։

Բայց դից կաճառն համախմբեալ անդայլ կերպ տնօրինեց. Հայր Արամազդ միւս մեծ ու փոքր աստուածներու պաղատանօք զինադադար հրամայեց քաջամարտիկ զուգահեյ։

Երկնահրաշք ձայնին հնազանդեցան դիւցազունք, մանաւանդ որ պարտասեալ ուժաթափ բազուկներն հանգստեան կարօտ էին։ Բայց երբ հարկ եղաւ վերստին ոտքի կանգնիլ — մենամարտը չարունակելու համար, յանկարծ իրենց նայուածքներն իրարու հանդիպեցան եւ ինչպէս սիրահար ու սիրուհի, այդ նայուածքէն սրտերնին շարժեցաւ, իրարու գիրկ լինկան եւ արտասուազին զիրար համբուրեցին։ Այո՛, փոխան արեան կաթիլներու, արցունքի կաթիլներ հոսեցան։ Եւ սակայն մեր ուրախութիւնը միշտ անտխեղծ ուրախութիւն է։ Այո՛, պէտք չէ իբր եսական ամբաստանել մի ազգ, երբ ունի այսպիսի զաւակներ՝ որք զիրար յօշոտելու պատրաստ են մինչեւ իսկ անծանօթ ոսկորներու համար։ Այսպիսի բարձր զոհողութիւն, այսպիսի գերազոյն առաքինութիւն, ո՛չ մի ժողովուրդի մէջ կայ։

Բայց արեան զոհողութիւնն այնքան մեծ չէ մեզ համար, որքան մեծ է համուլմանց զոհողութիւնն, որքան դիւցազնական է թշնամութեանց զոհողութիւնն։ Անոնք որ իրենց սրտին մէջ խորին ատելութիւն կը սնուցանեն ընդդէմ մի թշնամոյ, անոնք միայն կարող են ըմբռնել թէ որպիսի աստուածային առաքինութեան ընդունակ սիրտ մը պէտք է թշնամույն ճակատն համբուրելու համար. եւ մենք հանդիսատեսներ Կղանք այդ առաքինութեանց տեսարաններու։

Բերայի Թադ. Խորհրդարանն, — այդ շքեղ խորհրդարանն, որով կը մխիթարուին բերացիք երբ իյուշ կ'ածեն դպրոցի խեղճ յարկն, — վկայ եղաւ մեծամեծ առաքինութեանց եւ քաղաքագիտական նրբութեանց, չնորհիւ մանաւանդ Նուրեան էֆէնտիի գիւշանադիտութեան։

Ինչ կ'ըզեն թող ըսեն, ժամանակիս Հայոց ամենէն մեծը Նուրեան էֆէնտին է։

երկաթէ կամբի մը — եւ պողպատէ ձեռքի մը — կը միացնէ ամենախորին հմտութիւն մարդկային սրտի նուրբ թելերու : Երբ որ ուզէ, եկեղեցական ու աշխարհական, բարեկամ ու թշնամի կը դրպանէ : Նուրբան է- ֆէնտի հակառակորդն եմ, բայց զնա կը սիրեմ այս յատկութեան համար :

Գիտէ՞ք թէ Նուրբան էֆէնտի ինչ միջոցներու գիմեց վերջին դէպքերու առթիւ, կակղցնելու համար է՛ն կարծր սրտերը : — Երեւակայելը դժուար է : — այնքան ճշմարիտ է որ ամենապարզ մտածութիւններն են զորս գտնելը դժուար կը լինի : Նուրբան էֆէնտի պարզ բանաձեւ մը ունէր որով ամէն դուռներ կը բացուէին իւր առաջ :

Եկէ՛ք բոլորինք, սա սեղանին շուրջ

կը ձայնէ իւր Խաչքալէցներուն :

Ա՛յ ճարտար դիւանագիտութիւնը : Ո՛չ ապաքէն ըսած են թէ՛ «ստամոքսն է որ ուղեղին խորհուրդ կուտայ» : Եւ որպիսի՛ կարծր սիրտ պէտք է ունենայ մարդ մը որ կարենայ անյողդողդ լինել իւր սկզբունք- ներուն, եւ որ լաւագոյնն է իւր թշնամութեանը մէջ, երբ պարարտ սեղանի մը հրապոյրները վայելած է : «Ո՛չ մէկ թագաւոր ճշտէ մը վերջ կ'ստորագրէ մահապարտի ճանհուն միջոց : նոթի սովածները միայն ճանգութ եւ անարդար են : Ո՛չ, սեղանի վրէ վայելումներն եւ քմաց հաճոյքներ պէտք չէ լոկ նիւթական ինչ համարել : Նոցա ազգայնութիւնն կ'արտադրէ այնպիսի ար- ղիւնքներ որք յոյժ ծանրակշիռ են ընկե- ղրական տեսակէտով :»

Եւ փորձով գիտենք, մեր կաթողիկոսա- կան խնդիրն որպիսի՛ տարբեր գոյն պիտի առնուր առանց հրապուրիչ սեղաններու : Եւ նոյնպէս Պէշկիթալի գերեզմանատան խնդիրն :

Արդարեւ փետրի 9-ի երեւելի նստին, ժողովականք ապշած մնացին տեսնելով որ կրօնական հարք չեն յիշեր թէ տեղեկա- գիր մը ստորագրած են Քաղ. Ժողովոյ հետ եւ կ'սկսին յարձակիլ Քաղ. Ժողովոյ վրայ, իրենց ստորագրած տեղեկագրոյն վրայ :

— Ի՛նչ կ'ըսէք, սուրբ հայրեր, կը գոչէ ապշած ատենապետ էֆէնտին, ի՛նչ ստո- րագրած էք եւ ի՛նչ կը խօսիք :

Աւա՛ղ, ինչ որ ստորագրած էին ի Բերա, քաղցր համադամներ վայելելով, միթէ կրնա- յին յիշել զայն երբ քաղցած, սոված էին, դա- ժան դէմքեր կը տեսնէին : Ես լաւ գիտէի մեր սուրբ հայրերու փոփոխամտութեան գաղտնիքն, բայց վերջապէս ճշմարտու- թիւնն ըսելու հրաւեր մը չունէի : Բայց այն օր Նուրբան էֆէնտի շատ սխալեցաւ : փո- խանակ ինք եւ ընկերը ժամերով ճառելու, եթէ այդ սրահին մէջ մի քանի սեղաններ դրած լինէին, ի՛նչպէս մեր սրտերը պի- տի փափկանային, ինչպէս ամէն բանի այո՛ պիտի ըսէինք : Բայց, արի՛, վեց ժամ անօ- թի, սոված անդ կեցիր եւ յետոյ իրաւունք տուր, կողմնակից եղիր անոնց որ զքեզ այդքան կը շարժարեն : Ա՛յ, այդ տխմարու- թեան լրումն եւ կատարածը պիտի լինէր :

Այդպիսի սեղան մ'էր դարձեալ — աս- պընջականը միշտ Նուրբան էֆէնտի — որ փափկացուց անցեալ շաբաթ ամէն սրտեր : Ի՛նչ պիտի լինի այդ սեղանին ազդեցութիւնն մեր ազգային ճակատագրին վրայ : Գուշա- կելն այժմէն կարելի չէ, միայն սաշափն յայտնի է որ նախ Յառաջադիմական Միու- թեան հոգուն մատաղն էր :

Այդ խնջոյքին Փափագեան էֆէնտի գե- ղեցիկ դամբանական մ'է խօսեր մեր խեղճ Միութեան վրայ : Բառախաղեր ալ ըրած է : «Յառաջադիմական Միութիւն չէր այդ, ը- սած է Փափագեան էֆէնտի, այլ — քաղ- ճախ : Ո՛չ ապաքէն հիւսիսային արջին դի- մակը կը կրէր :» Այդ սրախօսութեան ծա- փեր են Մէրէմ-գուլի եւ Թորոսեան է- էֆէնտիներն, Յառաջադիմական Միութեան պետն ու պետիկն : Յետոյ Փափագեան է- ֆէնտի ի դիմաց հանդուցեալ Յառաջադի- մական Միութեան երգած է դիմառնաբար :

Երբ որ մեռնիմ ես ո՛վ ընկերք,
Փափագեանեանք խօսք տուին որ,
Լի բաժակներ ամէնուն ձեռք,
Պիտի պարեն չիրմիս բոլոր :

Եւ Փափագեան էֆէնտի պատասխանած է իւր սիրելին Մէրէմ-գուլի էֆէնտի որ բաժակը բարձր բռնած կ'երգէ :

Ընդ աստեղօք ի՛նչ կայ սիրուն }
Քան զանձղալի Փափագ անուն } եֆէնտի

Թրա լա լա լա, լա լա լա լա
Թրա լա լա լա, լա լա լա լա :

Փափագեան էֆէնտի սիրտն ուրախու- թեամբ զեղուած կը գոչէ թէ այդ հան- դիսաւոր օրն երբ մուսայները կը ներշնչեն զիրենք, պէտք է որ իրենց սրտերու աջքե- րը դառնան ի բնակարանն Մուսայից, ի լեառն Ոլիմպոս, ուստի պիտի դայ յոյս ու միսթարն : այլ եւս վերջացան դժբաղդու- թեանց օրեր :

Անցան սեւ օրեր, օրեր մահահոտ,
Բարթողի բաղդին ծագի առաւօտ :

«Չէք, հէք, հաւա՛ս», որոտընդոստ կ'ող- ջունեն Բարթողիմէոսի անունը բոլոր կոչնա- կանք : Եւ երբ կը տեսնենք աստուածահրա- լէր մեր պետերու ախրամած դէմքերն որոց վրայ սեւանիչ սողեալ կ'երեւին ազգանը- լէր իրենց սրտերու ուղեւ հոգետանջ, կը խանդաղատին մեր ոգիներ, կը խորասուզ- ունը փրկիսփայական մտածութիւններու մէջ, մեկնելու համար ազգասիրութեան ար- տայայտած հրաշալեաց գաղտնիքները :

Այդ մեկնութիւն կուգայ մեզ Բերա- յէն, Ս. Երրորդութեան եկեղեցոյ շրջա- կայներէն, բաժակաց շառաչիւններու թե- ռոց վրայ : Ամէն դէպքերու բանալին, ամէն գաղտնեաց մեկնութիւն պէտք է որոնել Բարթողիմէոս եպիսկոպոսի պատրիարքական ընտրելիութեան մէջ :

Ինչո՞ւ Փափագեան էֆէնտի, որ ո՛չ Ա- տենապետաց դիւանի անդամ է, ո՛չ Քաղ. ժողովական, ոչ մի ինչ է, եւ ոչ իսկ այլ եւս բարեպաշտ լինելու կեղծ համբաւը կը վայելէ, այնքան եռանդեամբ կը գործէր վերջին դէպքերու մէջ : Ի՛նչ անուամբ եւ ինչո՞ւ նախկին Յառաջադիմականք գրկա- բաց կ'ընդունէին նորա դործակցութիւնը : — Վասն զի Փափագեան էֆ. տեսնելով թէ իւր նախկին բարեկամաց խումբն իրեն մի- այն չորս քուէ վաստկուց Բարթողիմէոս եպիսկոպոսի համար, այժմ հաւ կուտայ անոնց եւ կը գրկախառնի Մէրէմ-գուլի էֆէնտիին յուսալով որ անգամ մ'եւս նա իւր կուսակիցներն իբր Կոստանք պիտի խաղցնէ : — Ոսկեզօծ ի՛կ անուրջը, ի՛նչպէս շուտ պիտի աներեւութանա :

Բայց ոմանք մեզ պիտի ըսեն. «Անխաւ- էք, այս անգամ Բարթողիմէոս եպիսկոպոսի պատրիարքութեան խնդիր չկայ, Երբ ձմե- ռը գայ, կ'ըսեն թէ գայլերը լեռներէն վար կ'իջնեն. երբ գարունը հասնի, ծիծեռնակ- ներն իրենց այցելութիւնը կ'սկսին, եւ երբ պատրիարքական խնդիր բացուի, Բարթո- ղիմէոս եպիսկոպոսի ձեռնասուն փորձառ- րը Պրուսայէն կը հասնի խաներն ու շու- կայները ման գալու եւ օրհնելու երեսփո- խաններն ու խմբագիրներն : Արդ, փետր. 9-էն ի վեր ահա՛ բացուած է Պատրիարքի ժառանգութիւնն եւ հայր սուրբը տակա- լին եւ ոչ իսկ Մուսայիա կը դեգերի : Աւ- րեմն այս անգամ Բարթողիմէոս եպիսկո- պոս չէ թեկնածու : Մի՛ գրպարտէք խեղճն եւ ոչ իսկ նորա Պրուս ներկայացուցիչն :»

Տրամաբանութիւնն անհրեքելի կը թուի եւ ստիպյն մեր կարծիքը տարբեր է : Մեր պատրիարքական թեկնածուք թէպէտ հայ են, բայց եւ այնպէս, իբր խոտորմունք, փոր- ձառութենէ կ'օգտուին : այս անգամ ազ- մագիտութիւնը պէտք է փոխել, քանի որ նախկին միջոցներն անյաջող արդիւնք ու- նեցան, վարդապետին երեւումն ի Պոլիս կը խանգարէ գործը :

Բայց այդ դեռ ոչինչ : Այսպէս խնդիր ալ կայ. եկեղեցական մը վերջապէս չէ կա- րող իբր աղքատ Ալեքսիանոս մը ապրիլ եւ հարստանալ ներելի է, բաւական է որ պարկեշտ եւ սուրբ միջոցներով աշխատի եկեղեցականը : Գիւղացի հայ քահանայն երկրագործ է նաեւ, ինչո՞ւ եպիսկոպոսն ալ վճառական չլինի : — Անի՛նք հերքող պատասխան մը : — Ո՛չ : Աւրեմն ճանշնալով Բարթողիմէոս եպիսկոպոսի եւ նորա փորրա- լոր-յան ձնարարակատարին իրաւունքներն, պատմենք հետեւեալն :

Մեզ կը հաղորդեն — մեզքը պատմու- ղին վիզը — թէ Պրուսայի առաջնորդա- րանը փոստաւոր վաճառատան մը կերպա- րանքն ունի : Սրբազանը վերին աստիճանի հոգածութիւն մը ունենալով փութ հօտին եթէ ոչ բարոյական գէթ նիւթական գոր- գացման մասին, խորհած է որ շերամի սեր- մերն եթէ օրհնուին անպատճառ բարի եւ առատ ծնունդ կ'ունենան : Այս բարի նը- պտտակա ժողովել կուտայ բաւական քա- նակութեամբ շերամի հօւնա զոր ժամկոչ- ները չալիւծ եւ փոքրաւոր վարդապետն անոց առաջն ինկած կը պտըտին ամէն կողմ, սրբազանին բարեւները կը հաղորդեն եւ կ'ըսեն թէ ով որ գնէ այդ հօւնտէն հայր Արահամու պէրէֆէր պիտի ունենայ : Եւ խաչակնքելով այն հօւնտերուն վրայ զորս կը վճառէ, առձեցէք եւ բազմացա- րուք կ'ըսէ : — Երանի՛ մարդկութեան բարերարաց : —

Բայց — եթէ այդ քսոյ բառը ջնջուէր մարդկային լեզուէն, ո՛րքան անտեղութիւնը պիտի ջնջուէր միանգամայն — բայց օրհ- նութիւն ու անէ՛ք եղբայրներ են ինչպէս խնդարն ու լալն, ով որ կ'օրհնէ կրնայ նաեւ անիծել : Եւ մեր հայր սուրբն այս պարտա- կանութիւնն ի գործ կը դնէ :

Պրուսայէն Պրուս վաճառականի մը գըր- ուած նամակի մը մէջ կը կարդանք : «Այն վարդապետն իւր հօւնտերը կ'օրհնէ, ի՛նչ ըսենք, ամեն մարդ իւր արուեստին գոյն է ըսուած է : Բայց գէթ մերինները թող չանիծէ : — Ով որ իրեններէն զատ ուրիշ հօւնտ կը գնէ, այդ հօւնտերը Սառայի պէս ամուլ ըլլան կ'ըսէ : Ա՛յ գիտեր ի՛նչ ձիւն կը բերէ մեր գլխուն : Աստուծոյ սիրոյն ըլ- լայ սա մարդը Պատրիարք ըրէք, տարէք աս տեղէն : Գէթ ասով պոսեցիները մեզ աղէկութիւն մը ըրած ըլլան :»

Վանեցիներն ալ Պողոս եպիսկոպոսին համար այսպէս կը գրեն մեզ, բայց ինչպէս երկու Պատրիարք ունենալը Գաւառացիները մեզմէ ուրիշ ծառայութիւն չեն սպասեր բայց եթէ իրենց գլխուն փորձանք եղող եպիսկոպոսները Պատրիարք ընել ու զիրենք ազատել, —ինչպէս Պապը կարգի ալ կ'ընէ հռոմէական Հայոց Պատրիարքներն ու կ'ազատէ զանոնք :

Ի՞նչ մասին Բարթողիմէոս եպիսկոպոսի Պատրիարքութեան հակառակորդներէն չեմ հրաւէ որ Բարթողիմէոս եպիսկոպոս գուցէ լինի ճշմարտող մեղացոյց Պատրիարք մը, բայց խնդրեմ որ եպիսկոպոսն է որ մեզը չբարդէ մեր մեղաց վրայ : Այս խնդրին անուշն է որ տեղի տուած է անախորժ բառախաղերու :

Մեզ համար նոր Պատրիարք մը նաեւ կաթողիկոսական ընտրելի մ'է : Պատրիարքական աթոռին վրայ պիտի ճանաչենք զինքն արժան կամ անարժան բարձրագոյն աթոռին : Եթէ կաթողիկոսական ընտրութեան միջոցին վերջնական ձայնը դարձեալ, շնորհիւ մեր տխմարութեան, մնայ Սինողականաց, Բարթողիմէոս Պատրիարք իրենց ամենէն յարմար կաթողիկոսացուն է : Ի՞նչ յատկութիւն կը պահանջէ սինողական մը կաթողիկոսէն : —Մանրամասն չեմ կրնար ըսել բայց էջմիածնայ վանականաց բարուց վրայ մի քանի բառեր եթէ ըսենք, դադար մը կարելի է տալ :

1884 թուականին, մայիս 5/17 ին կէս օրէն երկու ժամ առաջ կը մտնէի Ս. Էջմիածնայ վանքն : 1867ին ճիշդ նոյն օրն, մայիս 5/17ին, ճիշդ նոյն ժամուն և րոպէին մտած էի Վենետիկ Ս. Ղազարու վանքն, ուր մի քանի ժամ անցնելէ վերջ պիտի փոխադրուէիք քաղաքը Ռափայէի վան վարժարան : Այսպիսի զուգահեռութիւններ կը հարկադրեն մարդուս միտքը բազմաթիւութեանց : Ճեմեղով Ս. Էջմիածնայ բակին մէջ կը յիշէի Ս. Ղազարու բակն եւ կ'ապաստէի այցելել վարդապետաց, եպիսկոպոսաց սենեակներն, որք անշուշտ Մխիթարեան վարդապետաց խոցերէն լուսագոյն պիտի լինէին, մտաւոր զարգարանաց նշաններ արտայայտելով :

Այցելելիք այդ սենեակներն Ինչ հեշտութիւն : Ամէն ուրեք պարսկական գորգեր, ամէն ուրեք կակուղ «բաստեռուներ», եւրոպական սալներու ամէն հանգստութիւններ : Հայր սուրբը կամ Սրբազանն ընկողմանած է, բայց երբ հիւրը ներս կը մտնէ ամենայն քաղաքավարութեամբ վեր կը ցատկէ : Կը նստիս, կը խօսակցիս, աչքերըդ չորս կողմը կ'ածես —այդ ներելի է, վարդապետի մը սենեակն քիչ շատ ընդհանրութեան սեփականութիւն է —, ոսկեփայլ-ծափաբոյր կը պղպղայ, բիւրեղանման գաւաթները շարուած են, ի զուր աչքերդ կը խնդրեն թուղթի մը, լրագրի կտորի մը, գրքի երեսի մը հետքն : Բնա՛ւ : Որքան տարբեր Մխիթարեանի մը խոցէն՝ ուր հիւր մը նստելու աթոռ հազիւ թէ կարենայ գտնել եւ ուր սիւնուած են շաշարէն ամէն տեսակ գրքեր, վարդապետը գրասեղան մը ունի որուն առաջը գտնուած է. դէմը գլխաւորած, եւ կ'աշխատի : Ս. Էջմիածնայ վանքին մէջ մտաւոր կրթութեան զարգացման նշաններու այդ կատարեալ բացակայութիւնը կը բացատրէ այն մարմնական կորուստը, անասնական առողջութիւնն որք շատ եպիսկոպոսաց յատկանշներն են : Կան վարդապետներ որք գրեթէ էջմիած-

նայ մէջ իրր բնակութեան վայր նկուղներ ունին : Այդ տարաբաղ Ներսէս թէպէտ «Էջմիածնով կը շարժարուին», բայց մտքերն ուն չեն անցունել մխիթարութիւն որոնել ընթերցման մէջ :

Երբ զարմանքս յայտնեցի ոմանց, ինձ ըսին թէ՛ վարդապետ մը կայ որ շատ սիրելի չէ եղած, եպիսկոպոսաց թշնամանքն իւր վրայ դրաւած է, ուղածս անոր բով կրրնամ : Գտնել :

— Եթէ նա Բէթ (սենդ) չը լինիր, բոլ փախաբաժիդ : Նման չէր լինիր, ըսին :

Ուղեցի զիտնալ այդ վարդապետին անունն : Հ. Խորէն Ստեփանէ ըսին :

Վաղդուց կը ճանաչէի այդ պատուական անունը, մանաւանդ որ բժիշկ Պ. Նաւասարդեանէ յանձնարարական ունէի : Ուղեցի մօտն երթալ : Եւ ահա՛ տեսայ որ հեռուէն գեղաղէմ, վայելչաշատակ, մօրտք մի քիչ ճերմակով խաւն վարդապետ մը կուգար : Նշանաւոր դէմք մ'էր : — Հ. Խորէն Ստեփանէն է ըսի :

Վարդապետն ուղղակի մեր սենեակն եկաւ : Համբուրեց ճակատս, իրր հին բարեկամի մը, Մշակ աշխատակցի մը, ձեռքն համբուրեցի, եւ խօսակցեցանք : Այցելեցի իւր սենեակն, ամէն ուրեք գլրք, լրագրի, թուղթ, ահագին աշխատութիւն : Կաւ ուսում առած վարդապետ մը, քոյա կըրթուած, եւ յետոյ հոգեւորական : Գործած ազգին ծառայելու համար : Եւ պատուական մարդը կը թշնամանէին, կ'արհամարհէին, «մօտն զի տխմարը գիրք ունի, ուսում ստացած է եւ կ'աշխատի» :

Հ. Խորէն Ստեփանէ, յետ երկար հաւածանաց, այժմ Բեդերսպուրկ է, ուր սքանչացում կ'ազդէ նայն իսկ «ղափար» Ռուսաց :

Ուրիշ եպիսկոպոսի մը համար ալ ըսին թէ՛ գրքեր ունի եւ կ'աշխատի, բայց չի կրցի տեսնել :

Այս մանրանկար, դադար մը կուտայ թէ ինչ բարք ունին էջմիածնականք, ինչո՞ւ հակառակ էին Ներսէսի մը կամ Խրիմեանի մը :

Ուրեմն յանուն էջմիածնայ Սինողականաց ըսենք : «Ողջոյն քեզ, Բարթողիմէոս Պատրիարք եւ ապա կաթողիկոս» :

ՀՐԱՋՂԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՎԱԾԵԱՆ

ԻԶՄԻՐ, 1 Մարտ

Տեղւոյս հայ հասարակութիւնը դառն կորուստ մը կրեց այս շարաթ յանձին սոյն դժբաղդ երիտասարդին, որ վերջապէս ամեն դարմաններու հակառակ՝ չկրցաւ տուկալ անողոք ախտի մը եւ կնքեց իւր մահկանացուն ուրբաթ երեկոյ :

Ծնած է նա Նիկոմիդիոյ մօտ յԱտաբազար, եւ ուսում առած է Արմաշու վանքին մէջ՝ կարծեմ՝ Մամեան պատուելիէն : Հազիւ հազ աւարտած իւր դպրոցական շրջանը՝ փոխադրուած է ի Զմիւռնիա, ուր գրականութեան զբաղւած է : Ամուլ գտնելով այս ասպարէզ՝ ժամանակ մը վերջ Բաբիգ գացած է իրաւագիտութիւն ուսանելու : Հոն հետեւած է երեք տարիի չափ այս ուսման դասախօսութեանց, բայց անձ-

նակն տկարութեան պատճառաւ ստիպուած է զայն անկատար թողլով դառնալ ի Զմիւռնիա : Նոյն միջոցին բարեկամներու թախանձանօք ստանձնած է «Սըշալա» Սրբապետի խմբագրութիւնը, խմբագրական ասպարէզի իրաւաբանականէն նուազ տաժանելի կարծելով :

Բայց, աւա՛ղ, այս մասին դառն պատճառ մը կրած է, զի կաթողիկոսական խնդրոյ աթոռ երբ Հայրենասէր Ներսէսի նպատաւար կարծիք մը յայտնել ուղած է, ուրիշներու կողմէ բուռն յարձակմանց եւ հալածանաց ենթակայ եղած է : Երբ յորդորներ, զիմուսներ եւ խոստումներ արդիւնք մը չեն ունեցած՝ ազգային եւ օտար թերթերու հրատարակութիւններ, վարչական ազգեր եւ մինչեւ իսկ կրօնական իշխանութիւն ի կիր առնուած են մի միայն պատ դադար մը խորտակելու համար : Այլ սա ամեն ջանքէ եւ զօրութենէ գեր ի վեր ծիած է միշտ կարծես, եւ անոր հեղինակն անդր ուելի մնացած է իր նշանաբանին, այն է ուղղութեան, արգարութեան եւ անկողմնակալութեան : Իրեն գէմ մըլած պէս պէս զօրութիւններու ճակատ տուած է նա՝ ունենալով իրեն միջոց՝ իր գրիչը, յենարան՝ ժողովրդային համակրութիւնն, եւ գրչիւ տուող՝ արդարասիրութեան ազդած ներքին գոհունակութիւնը :

Ուստի երկար տառն յաջողած է նա իր զրօշ ծածանել արիւթար, մինչեւ որ ստիպուած է ծախլ դաւի ու նենգութեան՝ առջեւ : Սակայն այս պարագայի մէջ եւս եթէ նիւթապէս յաղթուած, բարոյապէս յաղթած է յայտնուած է իր անմեղութիւնն, արդարութիւնն եւ ճշմարտասիրութիւնը : Բայց, աւա՛ղ, աւերիչ գործողութիւնը, որ սկսեր էր անողոք ախտ մը՝ դաւը միայն շտապած եւ վերջացուցած է . . . :

Յարութիւն Սվաճեան ոչ միայն իր խմբագրական պաշտօնով ծանօթ եղած է ազգին, այլ եւ իր դրական գործերով : Ունեցած է շատ մը թարգմանութիւններ, լուրջ գրութիւններ, իմաստասիրական հրատարակութիւններ, իրաւաբանական յօդուածներ, թղթակցութիւններ եւ քերթուածներ ազգային հին ու նոր ամեն թերթերու եւ հանգէսներու մէջ, յորս ցոյց տուած է ինք միշտ պատմական եւ իմասնաւորի Ս. Գրոց պատմութեան խորին հմտութիւն մը, արամբանական ճշգրութիւն, եւ ընկերական խնդիրներու ծանօթութիւն, իմաստասիրական քերթողական հանճար, և կոկիկ, ընտիր ու մերթ երգիծական ոճ մը : Յօրինած է քերթուած մը Դեմոքրատիկ Մ. Տ. անուամբ վաղակորոյս եւ հրաշագեղ օրիորդի մը տխրալի մահուան վրայ եւ թարգմանած է Հիւկոյի Պապը ամենայն յաջողութեամբ եւ ճարտարութեամբ : ասոր համար յատկապէս շնորհակալութեան գիր մը ստացած է Խորէն Սրբազանէն, ուր բանաստեղծ եպիսկոպոսը թարգմանչին քերթողական տաղանդը գնահատած է : Իր գրական տաղանդն եւս ազգայնոց մէջ շատեր ճանչցած են, ինչպէս եւ մասնաւորաբար Տ. Տ. Նորայր Բիւզանդացի, Մ. Զեբազ, խմբագիրներ և այլն և այլն :

Այս ամեն բարեմասնութիւններով և կարողութիւններով՝ ուրիշ մը անշուշտ շատ աւելի աղմուկ եւ հռչակ կրնար հանել, բայց Սվաճեան միշտ արհամարհած է փայլը, փառքը եւ սիրահար մնացած է պարզութեան եւ համեստութեան : Ինչպէս ամեն կարգի անհատի նոյնպէս եւ գրագէտի համար շատ նպատաւոր չեն այս սլայմաններ, վասն զի ական յայտ կ'երեւի թէ մին-

չեւ աստիճան մը հոգակը կը յօրինէ մարդն եւ մանաւանդ գրագէտը, սակայն եւ այնպէս Սվաճեան թէ՛ իր շուրջ եւ թէ՛ հետին ունեցած է անթիւ համակիրներ ու բարեկամներ, որոնք ինչքան իր գրական տաղանդը նոյնպէս ազնիւ եւ ընտիր զգացումները գնահատած են:

Ուստի նորա մահուամբ ո՛չ միայն հայ գրականութիւնը կը կորուսանէ ընտիր գործիչ մը, այլ Չմիւռնիոյ հասարակութիւնը հմուտ քաղաքացի մը, հայ երիտասարդութիւնն՝ օգտակար եւ եռանդուն ընկեր մը, իր բարեկամներ՝ անձնուէր սիրտ մը, իսկ իր ընտանիք՝ համակիրքի եւ ազնիւ անդամ մը:

Մահուան հետեւեալ օրը տեղի կ'ունենայ յուղարկութեան արարողութեան արարողութեան հանդէսն, ի ներկայութեան Չմիւռնիոյ հայ երիտասարդութեան մեծագոյն մասին, հայ փոստաբաններու եւ բաղմամբ օտարականներու, Հանգուցեայի վերջին յառուէրին համեմատ գագաղը կառնով կը տարուի ուղղակի գերեզմանատուն, որու կը հետեւին քահանայից Դասը, զպիւրներ, եւ յուղարկատուներ բոլորն ալ կառնուելով, Հոն կը կատարուի ամեն խորհուրդ եւ այն ինչ թաղման արարողութիւնը կը վերջանայ, եւ իրտասարդ մը սրտայայտ կը կարգայ յատկապէս պատրաստուած գամբանական մը, ուր հանգուցեային համաօտակի կենսադրութիւնն եւ ընտիր ձիրքն ու գրական տաղանդը պարզեւէ ու գովելէ ետք՝ կը վերջացնէ խօսքն ըսելով. «Նայց քող մը թողուցէ այս տեսուր անցից վրայ, որոնց համար այս լուսաւ շիրիմը շատ աւելի բարձրածայն պիտի բողբէ ի սպաս, եւ մենք մեր վերջին յարգանքը մեր եղբայր բարեկամին ընծայելէ վերջ, անոր՝ ազնիւ եղբարց ու ազգականներու ալ միաթարութիւն եւ սիրտով խնդրենք երկնքէն:

ՏՖՂԻՍ, 22 փետրուարի

Մի քանի հայ հոգեւորականների մասնակցութիւնը գրամանենդութեան գործում, որը այժմ ամենայն խստութեամբ խուղարկվում է Անդրկովկասի զանազան քաղաքներում եւ գիւղերում, մեծ ազդու է գցել թէ կառավարչական յայտնի տեսակի անձանց մէջ, եւ թէ մեծ սրտնեղութիւն է պատճառել հայ շրջաններում: Մեր հոգեւորականները, որոնք աւելի ամօթ եւ աղետանք են բերում ներկայումս ժողովրդին՝ իրանց տղիքութեամբ եւ անարժանութեամբ, գէթ մի փոքր խիղճ պէտք է ունենային եւ հասկանային, որ այսպիսի լարուած եւ ծանր ժամանակ, երբ օտարը մի աւելի է ուզում՝ իր թաթերը մեր բոլոր գործերի մէջ խիլելու համար, պէտք է մի փոքր ամօթ ունենալ, եթէ չասենք պարտաճանաչութիւն: Թիֆլիսում ձերբակալուած Մանգուկունի քահանան շարունակում է բանտում նստել, նորա գրամանենդութեան մէջ մասնակցիլը շարունակում է ընկնել եւ խուղարկվել: Այդ քահանան այնքան վատ է ցոյց տուել իրան բարոյապէս, որ նրան ճանաչողները նրանից ամէն բան սպասում են, Յաւակն այն է, որ դեռ շատ ժամանակ առաջ Թիֆլիսի Առաջնորդարանը նրան ուղղակի հեռացնել այստեղից, բայց էջմիածնի մէջ գտնուեցան նրան ջերմ պաշտպանողներ, եւ ահա նա մեղադրվում է մի քանի անգամ մեծ յանցանքի մէջ, եւ բանից դուրս է գալիս, որ Հայոց հոգեւոր կառավարութիւնը ոչ թէ միայն այդ քահա-

նայի դէմ ոչինչ չէ ունեցել, այլ եւ նրան արժանացրել է բարձր հովանաւորութեան: Խայտառակութիւնը կրկնապատկի զորութիւն է ստանում: Եւ միթէ այս առաջին անգամն է, եւ գուցէ վերջին անգամը չի ինչ, որ էջմիածնում շարունակում են մի տեսակ հովանաւորութիւն ցոյց տալ զանազան տեղերի անբարոյական, կեղեքող, լիբրեւ անխիղճ գործակալ - քահանայներին, վարդապետին եւ այդ պիտի մորդոց ընդհանրապէս: Մի յանդակունի քահանայ բաւական չէր, եւ ահա հին Նախիջևանի մօտ գտնվող Եարրուջ գիւղի քահանան եւս, մի Սարգիս քահանայ անունով մէկը, որը մի ժամանակ մինչեւ իսկ յաւակնութիւն ունէր Օրբելեան յայտնի ժողովուրդեան վրա, կալանաւորվում եւ զինուորներով Թիֆլիս է բերվում: այդ քահանան էլ այժմ բանտարկված է: էջմիածնի այդ երկու քահանաներից ոչ մէկն էլ կարգաւոր չի արել: Այս էլ մի անխիղճութիւն: Ինչո՞ւ այդ պիտիներին չհանել իսկայն հոգեւորականութեան շրջանից: դոնէ դա էլ մի ցոյց կը լինի: Մի քանի տարի առաջ երբ Հոփիսի վանքում գրամանենդութիւն բաց վեցաւ, եւ վարդապետներին ուսման մեղաւորվեցան, Գէորգ Աթոյիկոսի հրամանով վարդապետին իսկոյն կարգաւոր արեցին, դեռ մարմնաւոր իշխանութեան ձեռքը չանցած: Իսկ այժմ այդ մասին մտածել անգամ չեն ուզում: Ինչ անուէր տալ: Ամէնքը եւ ամէն տեղ զայրացած են այս խայտառակութեան վրա: Ինքն իսկ ինքեան մի անսովոր բան չէ գուցէ որ երկու քահանայ գրամանենդութեան մէջ մեղադրվում են, Ռուսաստանի մէջ շատ ուսու քահանայներ, վարդապետներ եւ կոյսեր խառն են եղել այդ պիտի բաներում, բայց հայերի վերաբերութեամբ, այժմ, Ներկայ դրութեան մէջ, կառավարութիւնը մի առանձին նշանակութիւն է տալիս այս գէպերին, եւ գուցէ միտածում է (ով գիտէ արդէն եւ վճռել է) գրանով մի ընդհանուր հարուած տալ հայ հոգեւորականութեան իրաւունքին եւ պատուին: Եւ արդէն լուրեր է տարածվել, որ Պետերբուրգից կարգաւորել են, որ զրաւմանենդութեան այս գործի հետ միասին ընկնելու արդի եւ անցեալ տարիներու Հովիտի մէջ վանքի մէջ գտնուածը: Չանազան քաղաքներից լուրեր են գալիս, որ Նորանոր մարդիկ են մեղադրվում գրամանենդութեան այս գործում մասնակցելով: Երեւանում մի քանի անձինք արդէն ձերբակալուած են: Խուղարկութիւններ են եղել և Վաղարշապատում: Հին-Նախիջևանում եղել է ձերբակալութիւն Գործը դեռ շարունակվում է, եւ ընկնելիները գուցէ այնպիսի բաներ բաց կ'անեն, որ շատ էլ հաճելի չի լինել մեզ համար:

—Այս տարի ըստ սովորականին շատ տեղերում կատարվեցաւ Վարդանանց տօնը: Բայց, տարաբաղդ արար, ոչ նախկին շուքով եւ հանգչեով: Ուսումնարանները փակելուց յետոյ էլ այս կարեւոր տօնախմբութիւնն եւս ճնշման տակ դրվեցաւ: այժմ շատ տեղ չեն կատարում: եւ որտեղ էլ որ կատարել են, կատարել են մի տեսակ սահմանափակ կերպով, եւ ընդհանրապէս իբրեւ եփեցանք տօն, քան թէ Գրգուհեան: Վարդանանց տօնը մինչեւ այժմ մեր դպրոցական ամենափառաւոր տօնն էր: Եթէ այսպէս շարունակվին գործերը եւ յարաբերութիւնները, գուցէ այս տօնակատարութիւնն էլ չօջափելի դժգոհութիւններ պատճառի:

—Ռուսաստանից շարունակում են ուսու, մալական, դուխարօր եւ այլ զաղմտկան-

ներ բերել եւ լեցնել Անդրկովկասի զանազան կողմերը: Կառավարութիւնն առանձին խնամքով ուզում է մեր երկրի զանազան կէտերում հաստատել օտարներին, հայ տարրը անջատելու համար: Անդրկովկասի զանազան կողմերում հողի այնպիսի սակաւութիւն է տիրապետում, որ ժողովուրդը նիւթական եւ տնտեսական մեծ նեղութեան մէջ է: գիւղացուն հող է պէտք: Իսկ հող չկայ, քիչ է: Քանի քանի անգամ հայ գիւղացիները խնդրեց են տուել կառավարութեանը, որ իրանց թոյլ տրվի գաղթել դէպի Ղարսի կողմերի պարագահողերը, բայց հայերին միշտ մերժում են, եւ դորա փոխարէն բերում են դուխարօրներ, մալականներ, գերմանացիներ, եւ լեցնում են այն տեղերը, որտեղ լին են Հայոց աւերակների եւ անցեալ յիշատակարանների մնացորդները: Իսկ մի փոքր հեռու հայ գիւղացին, իր մայրենի հողի վրայ քաղցած պէտք է մնայ, եւ ճնշուի եկեղծ մալականից կամ դուխարօրից: Այս ահուելի քաղաքականութեան ծանրութիւնը անտանելի է գիւղացուն, եւ այդ առիթով գիւղական զատակարգի մէջ սկսվում է մի խորին առեւտրութիւն գէպի ուսում, եւ դէպի այն բոլորը, ինչ որ դրանից է գալիս:

Ռ. Հ.

ՂԱՐԱԲԱՂԻ (1)

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԱՆ - ՊԱՏԽԱՆԱՆ ՎԷՐ

ՀԵՂԻՆԱԿ

ՊԼԱՏՈՆ ՋՈՒԲՈՎ

Մոյն վէպը գրած է ուսու հեղինակ Պլատոն Ջուբով եւ հայերենի թարգմանած է Պ. Բաթթի եւ հրատարակած «Մշակ»ի մէջ: Կ'սկսի քաղաքային «Մասիս»ի մէջ համառօտելով եւ վերածելով մեր աշխարհագրութեան: Տարակոյս չունիք թէ ընթերցողք մեծապէս գոհ պիտի մնան:

Ղարաբաղի կը տիրէին հինգ հայ մելիքութիւններ. 1. Գիւլիստանի կամ Թալիշի, 2. Զրաբերդի, 3. Խաչենի, 4. Վարանդայի, 5. Տղակի մելիքութիւնները: Սոյն հինգ մելիքութիւնները կը կոչուէին Խաժապի մելիքութիւն: (Խաժապ արաբերէն կը նշանակէ հինգ):

Մեր վէպը տեղի կ'ունենայ Վարանդայի մելիքութեան մէջ: Բերդը կը կոչուի Չանախչի որ կը նշանակէ անօթներ չի ուղ: այդ անուն առնուած է բնակիչներու արուեստէն: Իսկ հայը կը կոչեն այդ բերդն ԱԻԵՏԱՐԱՆՈՅ: Մինչեւ այսօր պահպանուած է ժողովուրդի մէջ հին աւանդութիւնը թէ՛ Աղուանից Վաչական թագաւորը, քրիստոնէութիւն ընդունելով եւ Աւետարանը գիրկն առած, եկաւ, առանձնացաւ այդ բերդի մէջ ապաշխարելու համար եւ այդ օրէն այդ բերդը կոչուեցաւ Աւետարանոց: Մինչեւ ցայսօր կարելի է տեսնել այն տեղ Մելիք-Շահադարեաններու ամրոցներու աւերակներն ու ահագին պարիսպները, շատ տեղ ամբողջ մնացած:

Թալիշի գաւառն մին է Ղարաբաղի հինգ գաւառներէն, կը կոչուի նաեւ Գիւլիստանի գաւառ: Թալիշ կամ Թարիշ բերդը կը գտնուի Հօռիկի (Հախիսի մէջ) վանքի մօտ:

Եւ ինչպէս իրենց հարկերն է արդարաւոր իրենց վարձարեւոյնը :

— Իրաւունք ունի՞ք, հօրեղբայր, պատասխանեց Զուռնուդ, չեմ կրնար զիս արդարացնել, բայց պէտք է մտածէք որ մարդուս կեանքի մէջ երբեմն կը պատահին սոսկալիսի դէպքեր յորս անհնարին կը լինի սննդով ինչեւ իսկ խոհականութեան ամենախիստ ձայնին . . . :

— Եւ չեմ ուզեր ընենել թու պատճառներով, քանի որ դու չես ուզեր ինձ յայտնել զաղտնիքդ : Բայց ի՞նչ պատասխանեմ ինչեւ իսկ իրենց պատահին :

— Ինչ որ կը կամիս :

— Ըսելն հեշտ է, բայց կատարելը դժուար է Զեմ խոստով, Զուռնուդ, որ այդ ընկալեց իրեն վերջին Դարապաղի խաղաղութիւնը : Թալիշի մեկըն լաւ կը ճանաչէր ինչ էս, չափազանց խստապահանջ է նա անուշադրութեան պայմաններու մէջ : Ինչ պատճառ գոր առաջ դնենք, նա իրր իրաւորանք պիտի նկատէ զայնս եւ պատճառովն այնուհետեւ կը բորբոքի նորա եւ իր մէջ : Միւս մեկընքնէն ունիք կ'ստիպուին նորա կողմը լինել եւ ունիք մեր կողմը, եւ Դարապաղը կը դառնայ այնուհետեւ մի ամբողջ հանդիսարան արեւմտեան խաղաղութեան :

— Եթէ Թալիշի մեկըն խեղացի մարդ է, ապէտք է բաւականանայ երբ իրմէն ներքին իրեն կը խնդրեն : Իսկ եթէ ոչ, թող իրենց գայ, մենք ստորակներ չենք, ազատ արդիւն ենք, գէնք կը վճռէ :

— Ի հարկէ այդպէս է : Բայց շատ դժար մեզ յաղթութիւն յուսալ երբ մենք կ'ընենք այնքան պատերազմի առիթ : Լաւ մտածէ, Զուռնուդ, թո՛ղ չհրապարակէ զքեզ երիտաւարական աշխոյժը, խնդիրը բովանդակ չէք արապաղի խաղաղութեան խնդիրն է :

— Եթէ բռնեմ ձեր բոլոր խօսքերու կատարութիւնը, այսու ամենայնիւ չեմ կարող մոռնալ թալիշի մեկընի դասեր հետ, որովհետեւ չեմ ուզեր պիսի գործող ընել :

— Ինչ կը խօսիս :

— Ինչ որ կ'ընեմ ճշմարիտ է : Եթէ պըմախոսիմ այն աղջկան հետ, պիտի ատենեմ ինչ եւ պիտի ցանկամ նորա մահուան :

— Ինչ սոսկալի խորհուրդ է ծածկուած : Բայց խօսքերուդ մէջ, գոչեց մեկընը տեղէն որպէս ցատկելով : Իսկ պէտք է այդ պաշտօնին որ քիչ յայտնես :

— Այդ ես չեմ կարող, պատասխանեց Զուռնուդը սառնութեամբ :

— Ինչ, չեմ յայտնեմ, որոտաց մեկըն իրենց կատարութեամբ : Ինչ յիմար եմ երդում ես որ ի դուր ժամանակ կը վատենմ իրենց նման մի համբակի հետ, մինչ ուրիշ ելլաւ միջոցներ կան զքեզ հնազանդութեան ինքնախօս :

— Մտածեցէ՛ք, միկիք, որ ես չեմ վախճանար մահէն, ըսաւ Զուռնուդ տեղէն ելնալով :

— Զեմ երկնիցի մահէն, գոչեց մեկընը Զարկութեամբ : Լաւ, ըսաւ : Բայց դու այնպէս չուտ չես մեռնիր, որքան ալ ցանկաս : Ինչ կը ծանօթացնեմ մի այնպիսի մահ, որ յղարարապաշտի աւելի տաժանելի է քան արտական մահը : — Նոքարներ, բռնեցէ՛ք ինչպէս, գոչեց մեկընը, կաշխոյժեցէ՛ք շղթայաշարքով եւ բանտարկեցէ՛ք աշտարակի ստորեւ իրենց նկուղին մէջ, որ կը գտնուի գետակի մօտ : Եւ Տուէ՛ք նմա միայն ցամաք հաց կտուր, թող ստորի թէ ինչ կը նշանակէ իրենց ինչպէս հայրենեաց խաղաղութիւնն իւր իրենց յամառութեամբ :

Նոքարները (սպասաւորներ) դուրս հա-

նեցին Զուռնուդն որ ելած միջոցին սառն կերպով ըսաւ հօրեղբորն .

— Աղով դուք ոչինչ կը չահիք :

Բարկութենէն սաստիկ յուզուած մեկընը նստեցաւ գորգին վրայ : Մի քանի րոպէ լուռ մնաց եւ յետոյ ըսաւ աստղագէտին .

— Ե՛հ, սլարոն ստախոս, ո՛ր մնացինքու այն բարեյաջող աստղերն որոնցմով կը հրապարակէի զիս : Ես եւս ըսեմ տխուր գուշակութիւններու համեմատ փոխանակ լաւ րոպէին ընտրեցի վատ րոպէն խօսակցելու համար իմ եղբորդուդ հետ : Այդ պատճառաւ կուտեցայ անոր հետ, անոր հետ զոր աւելի կը սիրեմ քան մի հորազատ որդի : Իսկ ես պատճառն այդ բոլոր երկպառակութեան :

Եւ հրամայեց մեկընը նոքարներուն բանտարկել եւ աստղագէտն ալ : — Տարէ՛ք այդ ցնորածն ըսաւ, նետեցէ՛ք եւ զնա միւս նոյն ստորեկիւրեայ ներքնատան մէջ ուր այժմ նստած է իմ եղբորդուդ : Թող երկու խելագարներն իրարու հեռեմէն պատմեն :

Նոքարները տարին աստղագէտը :

Մեկընը վերստին նստեցաւ գորգին վրայ, հրամայեց, որ իրեն դէպքէն բերեն եւ սկսեց լուրջեմով խօսել : Նորա աչքերը կ'արտայայտէին սաստիկ յուսահատութիւն եւ արեւելիներէն ոչ ոք կը համարձակէր մօտենալ նմա :

ԳԵՐՄԱՆՈՅ ԿԱՅՍՈՐԸ

Քրոնիկագրին համար, Վիլհելմ Ա., Թագաւոր Բրանսլոյ, Կայսր Գերմանիոյ, մեծ անձնաւորութեանց ամենէն նուազ կնճառն է : Ունի՞ կիրք մը, աչքի դարձող ճաշակ մը, մեծամտութիւն մը : — Ոչ, Ոչ գրագէտ է, ո՛չ ալ պատմական բառարաններ կը լինէ իւր նախորդին նման : արուեստագէտ չէ, ինչպէս այնքան վեհապետներ որք այսօր իւր արքանեակներն են : Ոչ քերականութեան բարեպաշտ է եւ ոչ ազատաստէ, ո՛չ շատ կ'ուտէ, եւ ոչ շատ կը խմէ : ամեն բանէ առաջ զինուորական մէ, եւ առաջնակարգ զինուորական մը :

Վիլհելմ Ա. ոչինչ ըրած է՝ առասպել մը թողու համար : Իբր թագաւոր, ուզած է միայն լաւագոյն պահակ մը լինել թող տուած է որ գործեն իւր չորս դին եւ երբ ամեն ամառ Էմս, Հոմսթրիկ ևն. մտնէ, յաղթական դաւարագարը կամարներու տակէն կ'անցնի ուր արձանագրութիւնը կ'ողջունեն զայն անուամբ մը զոր պատմութիւնը (զէթ գերման պատմութիւնը) պիտի պահէ նորա համար : ԱՌԻՑԱԳԹԱԿԱՆՆ ԳԻՆԵԼԵՄ Այնքան փառաց եւ ձախողութեանց մէջ, միշտ պահած է իւր պատանեկութեան եւ ազատութեան տարիներուն միջնակարգ կեանքը : Այժմ հասած է, առանց ուրիշ հիւանդութեան բայց ինքն ծերութիւնն, իւր իննսուն տարիներու վեհափառութեան, միշտ հաւատացող թէ Նախախնամութիւնը տակաւին պէտք ունի իրեն, եւ թէ իրօք Եւրոպիոյ ժողովրդոց բարի հովիւն է, ուտից կախումն ունի խաղաղութիւնը :

Երբ մէկը ներկայացուի Ն. Վեհափառութեան, իւր առաջին ակնարկով վերէն վար կը չափէ զնա : այդ ակնարկը կարծես մեքենաբար կ'ընէ : « Հետեւա՛կ, հիւսա՛ւ, հեծեա՛ւ » : Կայսրն վեհապալած զինուոր մէ, կուրիկ կերպիւ հագած սեւ համազգեստ մը կարմիր զարդերով : Տարիքը տճեցուցած չէ նորա հասակն, հապա թիչ մը կը քաշ :

Դէմքը չափազանց խորումած է, հայեացքը արտամ եւ անորոշ, սակայն բերանը կը փակուի, եւ ծերունի զինուորականը խօսելու ատեն կը դարձնէ իւր սպիտակ պէխերուն ծայրերը :

Կայսրը կը խօսի կարճ պարբերութեամբ, ամէն մէկ բառին վրայ կ'օրհնուի եւ հին զինուորականաց այն կերկրումով որք ամառ ձեռնապնդումները նախամեծար կը համարին գեղեցիկ ճառերէ : Հոհնձոյէրնեանը չափազանց շոյալ են ձեռնապնդումաց մասին : Կայսրը գիտէ թիչ շատ Քրանսերէն : Փալ զիտէ անգլիերէն, որովհետեւ 1848ի դէպքերուն ատեն ստիպուեցաւ Անգլիա մնալ, եւ անդ՝ քսորեալ իշխանը թիչ մը առաջ տարաւ իւր կրթութիւնն որ միշտ միջակ մնացած է :

Կայսրը գրագէտ չէ բնաւ, գիտութիւնն որպէս եւ արուեստը բոլորովին փակ են նորա առաջ : Նոյն իսկ չհետաքրքիր գերման գրականութեամբ : Ֆրանսական միակ վէպ մը կարդացած է, Էսթէն Սիւի Թափառական Հրեայն : Իւր սեղանին վրայ ունի մի միայն բանակին վերաբերեալ տետրակներ եւ ամեն շաբաթ կը թղթատէ իւր փառաստէնի : Կաթիլի եւ Լեւալը Նեւիլ պատկերները : Կայսրն (ո՛չ իսկ Պիլմարք, Մոլդէ եւ բոլոր միւս զիւցազներն) երբէք տեսնուած չէ թանգարանի մը մէջ, եւ անցեալ ամառ մեծ դժուարութեամբ համոզեցին զայն որ գայ բանալ Պերլինի Գեղարուեստից ցուցահանդէսը : Կայսրն երբէք նուագահանգէս չերթար եւ իրեն համար անուշիմարութիւն մ'է Վալկերի հիացող լինիլ իւր թոռան Վիլհելմ իշխանին պէս, որ « Նոր Ողիմպոս » կը կոչէ զԿայսրը : Նոյնպէս շիրեր տաւա եւ կատակերգութիւն : օրէսան իւր միակ գրասանքն է, ոչ մէկ պուրէքէ ետ կը կենայ եւ հանդիսաւոր օրերուն, սրահին երեք չորրորդը կուտայ Պերլինի սպայից եւ գանձը հանդիսատես կ'ընէ վիթխարի պուրէքի մը :

Նախարարապետ Պիլմարք իշխանն ամեն օր պալատ չերթար : Երբ գործերը կարեւոր չեն, իւր Հէրպէրդ օրդին է որ կ'երթայ Կայսրն մօտ : Հէրպէրդը կ'օրհնէ կը կեղծէ իւր հօր ձեւերը, անոր գրին նման կը գրէ, եւ արդէն ապահովապէս կ'ընկատէ ինքզինքն առաջայ նախարարապետ, եթէ ոչ գահաժառանգ իշխան, որպէս օր մը Պ. Ճ. Լըմուան կոչեց զայն Տեպայի մէջ :

Անցեալ ամառ, սուրկարական տագնապի միջոցին, նախարարապետն ամեն միջօրէն յետոյ Պերլինէ կը մեկնէր Եւ մինչեւ Պապէլսպէրկի դեպի կ'երթար խորհրդակցիլ Կայսրն հետ : Նախարարապետը կը հասնի միշտ գոց կառքով, արդէն Պերլինցուց չերեւիր ո՛չ բաց կառքով, ո՛չ հետիոտն, հապա ձիու վրայ, համազգեստով, Անտառին ծառուղիներուն մէջ, եւ չը տեսնուիր ո՛չ թատրոնի մէջ, ո՛չ արքունեաց խնոյքներուն : Նախարարապետն հաղած է քիչ քիչ իրեն սեղմ համազգեստը, իւր ժութակը կը թողու կառքին մէջ եւ կ'առնու իւր մետաղեայ խոշոր սաղաւարտը : Ներս կը մտնէ, նախատեսեալը կ'անցնի, բարձրագլուխ, իբր տէր, թեւին տակ ունենալով կարմիր պարուկայն : Հսկայի հասակ մ'ունի, ծերունի առիւծի դէմքով, սպիտակ սոսկալի յօնքերով :

Սրբեմն, նախարարապետը կ'սպասէ նախապետներին մէջ : այն ատեն խիստ հետաքրքրական է դիտել զայն : Մոլորեալ

մարդու մը գէտն ունի, խօս հայեացքներով կը գննէ կարասեաց վրայ գտնուած ամենէն աննշան առարկայները, յանկարծ կանգ կ'առնու, այտը կը բերէ որպէս կ'ընէ խորհրդարանին մէջ երբ խօսիլ ուզէ, քեզի կը նայի առանց տեսնելու եւ: Նախարարացեալ կը մտնէ կայսեր դահլիճը, գալտնի խօսակցութիւնը կ'սկսի: Պէտք է ըսել որ նախարարացեալ թէն տէրն է, այսու հանդերձ շատ խոնարհ ցոյց կուտայ ինքզինքն իւր վեհապետին քով եւ հասարակաց մէջ միշտ կը կոչէ զայն «տէր» եւ ինքզինքը կը յայտարարէ «նորա ծերունի ծառայն»:

ԹՇՈՒԱՌՆԵՐ

(Բ. Տպագրութիւն. — Պարբերալար)
Վերջոր հիւկոյի ԹՇՈՒԱՌՆԵՐՈՒ ԵՐԿ-
րորդ տպագրութիւնն, որ ընդհատուած էր, սկսուած է շարունակուիլ. առաջին երեք հատորներն հրատարակուած էին արդէն և շարունակ հատորն ևս հրատարակուեցաւ անցեալ շաբթու:
Կեդրոնատեղին է Պէրպէրեան Տպագրատուն, Պոլիս, Էսկի Չապիլիէ Ճատտտէսի, Թիւ 63:

ԿՐԹԱԿԱՆ—ԳՈՐԾ

Գրեց Ս. ՅՈՎՆԱՆՅԱՆ
Այս Երկի մէջ մանուկը կը ներկայացուի չրջապատեալ իւր կենակցութեան հինգ գլխաւոր շրջանակներէն, — Տուն, Փողոց—Ընկերային շրջանակ, Եկեղեցի, Ուսումնարան և Խնամատուն: Անդ ցուցուած են 1. մանուկին «ճշմարիտ մարդ» լինելու յայտնի բնաձիր առանձնայատկութիւնները, 2. նորա եկամուտ չար հակումները՝ ձեռք բերած չրջակայների յօռ: վարողականութենէն, և 3. մեր ձեռք առած ուղղութիւններն՝ համաձայն մանկավարժութեան՝ այդ մատաղ սերնդի կրթութեան նկատմամբ: Ուստի սոյն գործը կը յանձնարարուի ազգային կրթութեան գործի բարեկամ ամեն ազգայնոց:
Կը գտնուի ամեն հայ գրադատաւաց քով, ի գին 5 Ղըշ:

ԱՌՁԵՌՆ ԲՈՒՍԱՐԱՆ

ՀԱՅԵՐԵՆԷ Ի ԳՈՂՂԻԵՐԷՆ

Աշխարհիկացի

Հ. Ա. ՈՍԿԵԱՆ

(Հրատարակուեցան Ա, Բ, Գ, և Դ. թերթերը)

Ազգային ուսանողաց և անհատից գործածութեան համար պատրաստուած սոյն Բառարանը պիտի պարունակէ առաւել քան 15,000 գործածական բառ, Նշան Կ. Պէրպէրեան մարուր տպագրութեամբ:

Բաժանորդագիրն է մայրաքաղաքիս համար 10, գաւառացի համար 15 դահեկան, թղթատարութեան ծախքն հրատարակչաց վրայ լինելով: Գաւառացի բաժանորդը կըրնան 15 դահեկանի դրօշմանով զրկել հետեւեալ հասցէին, և Տէրիստատէթոէ, Էսկի Պալը Չապիլիէ Ճատտտէսիտէն. 63, Նշան Պէրպէրեան մատպատընա:

Տպագրութիւնը լրանալէն յետոյ գիրքը պիտի վաճառի 20 դահեկանի:

Բաժանորդ գրուել ուզողը պարտին դիմել Պոլիս Նշան Պէրպէրեան տպագրատունը, Ղալաթիա, Գօմիսիօն խանի տակ Ե. Վրոյր և Ընկերութեան 25 թիւ թղթատվաճառանոցն:



ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՕՐԹ-Ն ՊՐԻԹԻՇ ԵՆՏԵՐՔԸՆԹԱՅԼ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

Ի Լոնդոն և Եդինբուրգ, հիմնուել 1809

ԴՐԱՄԱԳԼՈՒԹՅՈՒՆ Անգլ. Ոսկի 3 000,000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 5,978,900
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ Անգլ. Ոսկի 1,788,904

ՆՕՐԹ-Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

NORTHERN Assurance company

Ի Լոնդոն և Եդինբուրգ, հիմնուել 1836

ԴՐԱՄԱԳԼՈՒԹՅՈՒՆ Անգլ. Ոսկի 3 000 000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 3,131,300
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ Անգլ. Ոսկի 898 072

Ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի եւ կայծակի ի գործ կը դրուին վերոյիշեալ ընկերութեանց միացեալ գործակալութեան օգուտի: ամէն տեսակ շէնքերու ապրանց եւ կարասեաց վրայ խիստ նպաստաւոր պայմանօք եւ չափաւոր գնով:
Իւրերութիւն եւ կատարեալ ապահովութիւն մեծ գումարներ ապահովագրող եւ առատածուին եւ անմիջական հատուցումս վնասուց: Ընկերութեանցս երկարատեւ փորձառութիւնն եւ լաւ յարաբերութիւնները հասարակութեան հետ պէտքէ դատել սա իրողութենէն թէ միայն հրդեհի համար իւրեանց ինքնաբերութեան վեր տուած վնասնին 15,000,000 Անգլ. ոսկին կ'անցնի:

Մ Ա Ր Ի Թ Ա Յ Մ

Ծ Ո Վ Ա Յ Ի Ն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

MARITIME Insurance Co limited of Liverpool

ԴՐԱՄԱԳԼՈՒԹՅՈՒՆ Անգլ. Ոսկի 500,000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 120,590

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց եւ առագաստանաւուց մէջ առաւել քան 1000 զանազան խիստ օգտակար պայմանաւ:
Գնաց եւ վրայ տեղեկութիւն տաճու, ուղղութիւն, պարտին դիմել Ղալաթիա, Գօմիսիօն խանի տակ Ե. Վրոյր և Ընկերութեան 25 թիւ թղթատվաճառանոցն:

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ

Գործակալ Կ. Պալը Չապիլիէ Ճատտտէսիտէն Ընկերութեան

ԻՄԴԸՐՆ Է ՃԷՆՍԻ

Գարաքէոյ, Տէյրմէն խան, Կ. Պոլիս
Կ'առաջարկէ մեր գաւառացի ընթերցողաց իրենց հաւոյն գանձել իրենց առեւտրէն և իրենց հաւոյն վճարել իրենց պարտքերն. ինչպէս և իրենց հաղորդել առեւտրական ամեն տեղեկութիւններ եւ իրենց յանձնարարութեան համեմատ ամեն ինչ գնել միջնորդէքով:

ԱՌ ԾԻՈՂՍ

Յաճախ կը պատահի որ կուրծքը կը յոգնի ծխախոտի մուխէն եւ շնչափողի խողովակները կը գրգռին: Այս պարագային մէջ, լաւագոյն բանն է ՆԻԲՈՍԻՏԻ բաղադրի մը առնուլ մէն մի գլանիկէ յետոյ:

Այս հեշտահամ շաքարահատը կը զովացնէ շնչառութիւնը, կը մեղմէ խողովակաց ցաւերն եւ բարեբար ազդեցութիւն մ'ի գործ դնէ, որովհետեւ կը պարունակէ ծխախոտին գեղթավիւր եւ կը ջնջէ անոր վնասակար ազդեցութիւնները:

Նիքոսիտի Բաղադրի տուփերը կը ծախուին ի գին 4 Ղըշ: Կը գտնուին ամեն լաւ դեղատանց մէջ: Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիա մեծ փողոց թիւ 35 (Կայարան Թրամուէյից):

ԻՐԱՏ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Ամեն անոնք որ կ'ուզին ձեռք բերթ տար դեղագործական մասնագիտութեան զորո ջեն կարող գտնել իրենց վաճառին քով, կրնան դիմել Դեղագործական ՍԵՐՈԲԵԱՆԻ Կ. Պոլիս, Ղալաթիոյ մեղոց, 33: Առաքումը կը լինի փոստով: Իսկ մէկ սրուակի կամ տուփի համար խնդրանքին հետ զրկուի փոխարժէքն: Ղին ճիշդ անուանը: Պէտք է յատկապէս ուղղին անունն եւ հասցէն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԵԼԵԿՏՐՈ-ՆՈՅՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂ

Հիմնուել Կիւստանթնիքի Կ. Պոլիս

ԳՆԴԱԿՆԵՐ Արեան պակասութեան հանուր տկարացման համար
ԳՆԴԱԿՆԵՐ Խոլի համար (արեան գութիւնը):
ԳՆԴԱԿՆԵՐ Յօդացաւերու համար
ԳՆԴԱԿՆԵՐ Տեղեկութեան համար
ԳՆԴԱԿՆԵՐ Ամուրեղու և զօրացնող մար խաչափողերը, թոքի մար խաչափողերը, որդերու ԳՆԴԱԿՆԵՐ Հնտախոտի դէմ:

100 Գնտակներու գինն է 3 Ղըշ: Կը ծախուին Դեղագործական Մըթերանոցն, Ղալաթիոյ մեծ փողոց, 33: Ուէից կայարան:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՆ
ՏԱՐԱԲՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԻՐԱՏ